

Ապրեսյան Մ.

Այվազյան Ա.

Երևանի պետական համալսարան

ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ABSTRACT

THE BASIC PRINCIPLES AND MEANS OF "EXPRESSIVE SYNTAX" IN ENGLISH

The present article highlights the basic principles and means of "expressive syntax" in English.

As is known, expressiveness covers all areas of the language: its arsenal of expressive means is not limited. Paying proper attention to the problems of expressiveness particularly to concepts of "expressive syntax" and "stylistic syntax" some of the scholars adhere to the point that the subjects of their study are somewhat different. "Expressive syntax" explores linguistic sources of speech expressiveness, whereas "stylistic syntax" studies the structure of speech with regard to its stylistic features.

Key words: *expressive syntax, stylistic syntax, speech expressiveness, linguistic basis, linguistic environment.*

РЕЗЮМЕ

ОСНОВНЫЕ СРЕДСТВА ЭКСПРЕССИВНОГО СИНТАКСИСА (на материале английского языка)

Данная статья посвящена представлению основных средств, используемых в экспрессивном синтаксисе, и их обобщению.

Необходимо заметить, что арсенал этих средств безграничен: актуальное членение предложения, парцелляция речевого потока, фразировка речевого потока и т.д. Уделяя должное внимание вопросам выразительности речи, в частности понятиям «экспрессивный синтаксис» и «стилистический синтаксис», некоторые ученые придерживаются мнения, что предметы их исследования отличаются.

«Экспрессивный синтаксис» изучает лингвистические основы экспрессивности речи, в то время как «стилистический синтаксис» исследует построение речи с точки зрения их стилистических средств.

Ключевые слова: *экспрессивный синтаксис, стилистический синтаксис, эмоциональная речь, лингвистическая основа, лингвистическая среда.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում փորձ է արվում երևան բերել և ընդհանրացնել արտահայտչական շարահյուսության հիմնական միջոցները: Համալեզվական հիմնակարգ լինելով՝ արտահայտչականությունը շոշափում է լեզվի բոլոր ոլորտները, և դրա արտահայտչամիջոցների զինանոցն ուղղակի անձայր է: Պատշաճ ուշադրություն դարձնելով լեզվական արտահայտչականության հարցերին, մասնավորապես «արտահայտչական շարահյուսություն» և «ոճական շարահյուսություն» հասկացություններին, հատկանշական է, որ դրանց ուսումնասիրության առարկաները տարբեր են. «արտահայտչական շարահյուսության» մեջ ուսումնասիրվում են արտահայտչական խոսքի լեզվաբանական հիմքերը, իսկ «ոճաբանական շարահյուսությունը» հետազոտում է խոսքի կառուցվածքը ոճական հատկանիշների տեսակետից:

Բանալի բառեր՝ *արտահայտչական շարահյուսություն, ոճաբանական շարահյուսություն, հուզական խոսք, լեզվաբանական հիմք, լեզվական միջավայր:*

Հայտնի է, որ անվանական բաղադրիչները (բառակապակցությունները) հաղորդակցման ընթացքում ինքնին չեն կարող ծառայել որպես իրազեկակիրներ: Դրանք այդպիսին են դառնում՝ միայն մտնելով «դինամիկ շարահյուսության» տիրույթ: Այդ դեպքում մենք գործ ենք ունենում առկայացական տրոհման՝ ասույթի գործառական հեռանկարի հետ:

Դինամիկ շարահյուսության մակարդակում առաջնային պլան է մղվում իրականությունը հարաբերակցվող, ավելի կամ պակաս բարդ ասույթ ներկայացնող տեքստը:

Նախադասության մեջ պարփակված իրազեկության վերաբերումն իրականությանը առկայացնում է յուրաքանչյուր նախադասություն տեքստում (խոսքում), դրանով ստեղծում ասույթ: Վերաբերումն իրականությանը ամեն մի տեքստի բնութագրական հատկանիշն է: Սկզբնական շրջանում նախադասության մակարդակում դիտարկվող այդ հատկանիշն ընկած է ստորոգման կարգի ուսմունքի հիմքում: Վ. Վինոգրադովը գրել է. «... Նախադասություն կազմավորող ստորոգման ընդհանուր կարգի նշանակությունն ու նշանակումը հանգում են նախադասության բովանդակության վերաբերմանն իրականությանը» [Виноградов, 1954]: Հետևաբար տեքստի բովանդակության վերաբերումն իրականությանը հենվում է նախադասության ստորոգման վրա:

Կամայական ասույթը ներառում է, որպես կանոն, լսողին հայտնի փաստեր, իրազեկումներ և այն նորը, ինչի համար իրականանում է հաղորդակցումը: Լսողի նախնական իրազեկվածությունը ստեղծում է ինչպես նախատեքստ, այնպես էլ առարկայի կամ երևույթի վերաբերյալ նախորդած գիտելիքներ:

Ինչպես գիտենք, առկայացական տրոհումը սովորաբար բաժանում է տեքստի մի հատվածը, օրինակ՝ նախադասությունը, իրազեկային երկու բաղադրիչի՝ թեմայի (հայտնին) և ռեմայի (նորությունը): Այդպիսի անդամատումը կարող է համընկնել ենթակայի և ստորոգյալի շարահյուսական անդամատմանը (սակայն դա միշտ չի պատահում): Առկայացական տրոհման լեզվական միջոցներ են դիտվում առոգանական (հնչերանգ), շարահյուսական (շարադասություն) և բառային միջոցները (հոդեր, դերանուններ, մակբայներ և այլն): Թեմա-ռեմա (կամ էլ դրանց արտահայտչական տարբերակը՝ շրջուն շարադասությամբ՝ ռեմա-թեմա) հակադրությունն իրականանում է բանավոր խոսքում ստորոգական դադարի՝ որպես առոգանական արտահայտության գլխավոր միջոցի օգնությամբ:

Ստորոգական դադարը հատուկ նշանակություն է ձեռք բերում այնտեղ, որտեղ առանց նրա դժվար կլինեք ասույթի իմաստը հասկանալը. այն ազդանշում է նախորդի ավարտը և հաջորդի սկիզբը, ասույթի

հաղորդակցորեն քիչ թե շատ կարևոր հատվածը, այսինքն՝ կատարում է իմաստագատիչ գործառույթ:

Խոսողության ընթացքում առկայացական տրոհումը կարող է փոխվել (հենց այդ գործունը հատկապես կարևոր է դինամիկ շարահյուսության արտահայտության պլանի համար): Նման փոփոխության ընթացքում խոսողն ազատ չէ ստորոգական դադարի դիրքի ընտրության հարցում: Նա այդ դադարը ներմուծում է այնտեղ, ուր այն պահանջում են ասույթի կառուցվածքը և հաղորդակցության ընդհանուր նպատակները, այդ թվում՝ արտահայտչականը:

Ստորոգական դադարի՝ որպես առկայացական տրոհման միջոցի համակցության մեջ կարող են հանդես գալ նաև շարահյուսական միջոցները, օրինակ՝ արտահայտչական նպատակներ հետապնդող շրջուն շարադասությունը (չեզոք նախադասության մեջ թեման սովորաբար նախորդում է ռեմային), մասնավորապես՝ ռեմայի առաջադասումը:

Անգլերենում գոյություն ունեն որոշակի միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ազդանշելու նախադասության «առկայացական անդամատումն» այն դեպքերում, երբ այն չի զուգադիպում նախադասության շարահյուսական անդամատմանը: Այդ միջոցներից են շարադասությունը, հոդերը, մասնիկները, հնչերանգային առանձնացումը, հատուկ կառույցները: Շատ դեպքերում անգլերենի նախադասության սովորական շարադասությունից (ենթակա-ստորոգյալ) շեղումը բացատրվում է հենց նախադասության «առկայացական անդամատումն» արտահայտության կարիքով:

Ռեմայացման միջոց կարող է ծառայել անորոշ հոդով գոյականը: Այն դեպքում, երբ ենթական կամ ենթակայի միջուկը գործածվում է անորոշ կամ զրո հոդով, որպես կանոն այդ ենթական համարվում է դատողության տրամաբանական ստորոգյալը:

Վերջադաս գործածվող այն պարագայական բառերը, որոնք ենթակա են ռեմա արտահայտելու, կարող ենք առաջադասվել, որով փոխվում է նախադասության շարադասական կառուցվածքը: Ռեմայակիր կարող են լինել ստորադաս նախադասությունները:

Առկայացական տրոհումը արտահայտչական շարահյուսության կարևոր տարրերից է, որոնք թույլ են տալիս առավել հստակ որոշել ասույթի իմաստային սահմանները: Առկայացական տրոհումը գրավոր և բանավոր խոսքի բազմազանությունն ապահովող երևույթներից է:

Ձեղչված անդամով նախադասություն: Ձեղչված անդամ(ներ)ով նախադասությունը բնութագրվում է քերականական կառուցվածքի կամ նախադասության կազմի թերիությանը այն բանի հետևանքով, որ նրանում բացակայում է մեկ կամ մի քանի անդամ (գլխավոր կամ երկրորդական) պարզ դարձող համաշարից կամ իրադրությունից [По-зенталь, 1977]: Ըստ Լ. Բարխուդարովի՝ զեղչված անդամ(ներ)ով նախադասությունները բաժանվում են հետևյալ խմբերի.

- Ձեղչումը վերականգնվում է տվյալ նախադասության թելադրանքով:
- Ձեղչումը վերականգնվում է նախորդ նախադասության միջոցով: Դա կարող է լինել խոսողի դեմքով (կամ մեկ հեղինակի խոսքի սահմաններում) արտասանված նախադասություն:
- Նախադասությունը, որի միջոցով վերականգնվում է զեղչումը, կարող է արտահայտված լինել այլ (երկխոսության խոսակցի) դեմքով:
- Ձեղչումը վերականգնվում է հաջորդող նախադասության միջոցով: Դա ավելի քիչ է պատահում, սակայն անգլերենում նման կառույցներ, այնուամենայնիվ, հանդիպում են [Бархударов, 1975]:

Շարութաբանորեն լրացվելիք զեղչված նախադասության ամբողջական ուսումնասիրությունն առաջին հերթին մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոճաբանության համար, որը կապակցված խոսքի՝ ստեղծագործության կազմում ուսումնասիրում է նախադասությունների փոխհարաբերությունը:

Ձեղչման վերականգնման համար պարտադիր չէ տվյալ զեղչված նախադասության՝ համաշարում զրո փոփոխակով բառի բացահայտ

արտահայտվածություն ճիշտ այն ձևով, ինչպես այն պետք է կիրառված լինի զեղչված նախադասության մեջ:

Երբեմն զեղչված նախադասության՝ գրո փոփոխակով բառերը չեն կարող վերականգնվել համաշարի օգնությամբ, բայց բացահայտման համար պահանջում են դիմել լեզվում պատահող համաբանական այլ կառույցների, թեև գրանցված չեն տվյալ զեղչված նախադասության անմիջական համաշարում: Այդպիսի կառույցներին են վերագրվում հորդորական նախադասությունները, հարացուցայնորեն լրացվելիք զեղչումը:

Կա նաև անորոշ (ինֆինիտիվ) նախադասություն, որում բացահայտ ներկայացված է միայն ինֆինիտիվը կամ բայական բառակապակցությունը՝ ինֆինիտիվ միջուկով: Դա կարող է դրսևորվել նաև {ինֆինիտիվ to be բայ-մասնիկ + անվանական մաս} կաղապարով: Այդ տիպի նախադասություններին կարող են նախորդել what, how կամ why դերանունները (երբեմն պատահում են և այլ դերանուններ):

Խոսքային հոսքի մասնատում: Մասնատման իրողությունը հատկացվում է լեզվական հանրույթներին: Այն հետազոտվել է տարբեր լեզուների ատաղձի հիման վրա: Տեքստի ուսումնասիրության, նրա անդամատման եղանակների և կազմավորման հետ կապված՝ մասնատումը դարձել է շարահյուսական հետազոտության արդիական խնդիրներից մեկը:

«Մասնատում» տերմինը համարժեքն է ֆրանսերեն parceller-ի, որ նշանակում է «բաժանել, հատել մասերի»: Այն գործածվում է նշանակելու համար տեքստի անդամատման եղանակը: Ինչպես հայտնի է, մասնատումը վերաբերում է արտահայտչական շարահյուսության ոլորտին: Մասնատումը լեզվաբանական գրականության մեջ չունի լիակատար և միանշանակ բնորոշում, որն անտարակույս կապված է հենց այդ մասնատման բազմապլանայնության հետ՝ ըստ դրա հետազոտության մոտեցումների տարբերության:

Ըստ Ե. Իվանչիկովայի՝ մասնատման էությունը շարահյուսորեն կապակցված տեքստի տարրալուծումն է հնչերանգորեն տրոհված

հատվածների՝ առանձնացված վերջակետով: Ընդ որում՝ Ե. Իվանչիկովան, մասնատումը համարելով արտահայտչական շարահյուսության հնար, այն հատկացնում է սուկ գրավոր լեզվի գրական ոլորտին [Иванчикова, 2010]:

Այս երևույթի հետազոտությունը հիմնականում երկու գծով է կատարվում:

Մասնատումն իմաստակառուցվածքային հայեցակետով ուսումնասիրող լեզվաբանները, որպես կանոն, ուշադրության են առնում մասնատված կառույցների առանձնահատկությունները հիմնամասի հետ կապված մասնատյալների դիրքի և միջոցների, դրանց քիչ թե շատ իմաստային սերտակցության տեսանկյունից, ինչպես նաև մասնատյալների կազմի և շարահյուսական կարգավիճակի տեսանկյունից:

Մասնատման երևույթը բառաձևի կամ բառակապակցության հնչերանգային (շատ հաճախ՝ նաև դիրքային) անդամագատումն է, որի ընթացքում այդ անդամագատ և դեպի վերջ փոխադրված տարրը ձեռք է բերում ինքնուրույն նախադասության հնչերանգային շղարշ և իրազեկային բեռնվածություն: Յ. Վաննիկովը, «մասնատում» ասելով, հասկանում է «շարահյուսական միասնական կառուցվածքի, այսինքն՝ նախադասության խոսքային անդամատման այնպիսի միջոց, որի ընթացքում այն մարմնավորվում է իմաստահնչերանգային ոչ թե մեկ, այլ մի քանի խոսքային միավորներով՝ ասույթներով» [Ванников, 1965]:

Վ. Գակը մասնատումը դիտարկում է որպես նախադասության ու վերասույթի միջակա ձև և բնորոշում այն որպես մեկ ասույթի ձևավորում հնչերանգորեն տրոհված հատվածների շարքում: Գրության մեջ այդ խոսքային միավորները՝ որպես ինքնուրույն նախադասություններ, տրոհվում են վերջակետերով: Մասնատման հիմնական իմաստաբանական նշանակությունը, ըստ Վ. Գակի, հավելման հարաբերությունն է, կառուցվածքային տիրույթում՝ միավորումը (մասնատյալը կառուցվածքորեն չի հարաբերակցվում հիմնային կառուցվածքի տարրերից և ոչ մեկի հետ): Խոսելով մասնատվող կառույցների գործառման մասին՝ Վ. Գակը մատնանշում է դրանց՝ «նախադասության խիստ կաղապար

հաղթահարելու և շարահյուսական կառուցվածքը ասույթի համապատասխան հաղորդակցական պահանջներին հանգեցնելու» ունակությունը: Մասնատյալն արտահայտում է ասույթի ռեման, ի մի է բերում միտքը, հստակեցնում ասվածը [Դաֆ, 1981]:

Մասնատված կառույցների վերլուծությունն իմաստաբանության տեսանկյունից մի շարք հետազոտողների բերում է այն եզրահանգման, որ նախադասությունը և նրա մասնատյալ «համարժեքը» հանդես են բերում իմաստային լիակատար նույնություն:

Մասնատյալ կառույցները ոճագործառական հայեցակետով ուսումնասիրող լեզվաբանները միաբերան նշում են, որ մասնատումը արտահայտչական շարահյուսության հնար է, որի էությունը նախադասության կառուցվածքի անդամատումն է մի քանի հնչերանգատրոհական մասերի՝ որոշակի ոճական տպավորություն ստեղծելու նպատակով, որ մասնատյալ և չմասնատյալ նախադասությունները միմյանց հարաբերում են որպես ոճական փոփոխակներ: Ընդգծվում է, որ մասնատման միջոցով հասնում են լեզվական միջոցների խնայողության, որը դրսևորվում է մի կողմից՝ արտահայտության պլանի մեկ միավորի՝ բովանդակության պլանի մի քանի միավորների համապատասխանությամբ, մյուս կողմից՝ արտահայտության պլանի նույնական միավորների խտացմամբ:

Որոշ հայեցակարգերի գնումը հնարավորություն է տալիս նշելու հետազոտողների մոտեցումների տարբերությունը մասնատման վերաբերյալ, մասնավորապես, մի մասը մասնատումը համարում է խոսքային երևույթ՝ առաջարկելով խոսել ոչ թե կառուցվածքային տարբեր տիպի նախադասությունների, այլ ասույթների մասնատման մասին, ուրիշները սահմանափակում են մասնատման ոլորտը նախադասությամբ: Ասվածին զուգընթաց՝ շոշափվում են նաև հարցեր՝ կապված մասնատման և դրան մերձ երևույթների (տրոհում, գեղչում, հարակցություն) սահմանափակման սկզբունքների հետ:

Ընդմիջարկությունները և դրանց գործառույթները: Տեքստի՝ վերատուրային միասնության կարևորագույն խնդիրներից մեկը դրա և նա-

խաղասության շարահյուսական կառուցվածքի փոխկապակցվածության և փոխազդեցության ուսումնասիրությունն է:

Նախադասությունը՝ որպես գծային կառուցվածք, բնորոշվում է իմաստաբանական և հաղորդակցական հարաբերությունների կազմավորման օրինաչափություններով: Լինելով կառուցվածքային ամբողջի մի մասը՝ նախադասությունը երևան է հանում տարասեռ բառեր, կառույցներ («ազդանշաններ», «նախանշաններ»), որոնք վկայում են նրա կապը նախորդ հաղորդման հետ (կամ նախորդ նախադասության, կամ վերասույթի՝ տեքստի շրջանակում):

Նախադասության և վերասույթային միասնության միջև կառուցվածքային (և իմաստային) կապ ապահովող տեքստակազմ միջոցների (շաղկապներով, դերանուններով, շարահյուսական գուգահեռայնությամբ արտահայտված նախաբերիչներ, հետաբերիչներ) համախմբությանը, անկասկած, չնայած դրանց «տրոհմանը», վերաբերում են նաև բազմաթիվ ընդմիջարկություններ:

Անզլերենում վերասույթ ձևավորող նախադասությունների կազմությունը ոչ միշտ է համապատասխանում կառուցվածքի այն կանոններին, որոնք նախատեսում է կանոնական քերականությունը: Իրական՝ կենդանի խոսքում նախադասությունները հաճախ դրսևորում են բնականոն ռիթմի և հնչերանգային գունապնակի կառուցիկության, սահունության ու դրվագայնության տարաբնույթ «խախտումներ»: «Խախտումների» ուսումնասիրության տեսական հիմք է ընդմիջարկությունների մակարդակը: Այս «խախտման» էությունն այն է, որ նախադասության կազմ են թափանցում որոշ բառեր և շարահյուսական կառույցներ՝ ընդմիջարկություններ՝ «խախտելով», «քանդելով» շարահյուսական գծային կապերը [Александрова, 1984]:

Ընդմիջարկություն բովանդակող մեկուսի նախադասությունը հաճախ չի կարող լրիվ պատկերացում տալ ո՛չ ասույթի առարկայի, ո՛չ ընդմիջարկության բովանդակության մասին: Միայն տեքստի սահմաններում այն կարող է պարզ լինել, իսկ ընդմիջարկությունը, քանդելով նախադասության կապերը, իր բովանդակությամբ լսողի/ընթերցողի

ուշադրությունը միացնում է նախապես ասվածին և դրանով կապ հաստատում (ընդհանրացնում, եզրահանգում, նույնացնում) տվյալ պահի բովանդակության ընկալման հետ: Նախքան արտահայտչական գործառույթների այդպիսի «խախտումներին» անդրադառնալը՝ դիտարկենք նմանատիպ ընդմիջարկությունների կառուցվածքն ու նշանակությունը:

Օ. Ալեքսանդրովան իր դասակարգման մեջ, տարբեր հայեցակետերով մոտենալով խնդրին, դրանք ներկայացնում է գույգ երեքական խմբով.

1) միաբառ ընդմիջարկություններ՝ *again, anyway, doubtless, first, further, furthermore, hence, however, indeed, moreover, next* և այլն,

2) բառերի կապակցությամբ ընդմիջարկություններ, որոնցում լայնորեն տարածված են *after, along, at, by, for, from, of, on, since, to, towards, throughout, with, without* շաղկապներով կապակցությունները՝ *after all, at any rate, for example, on this basis* և այլն.

3) նախադասությամբ արտահայտված ընդմիջարկություններ՝ *he said, I think, they said, we believe, one may think* և այլն:

Ընդհանուր բովանդակության տեսանկյունից ընդմիջարկությունները բաժանվում են երեք կարգի.

1) Հղման կարգ, որ արտահայտվում է բառերով, շարահյուսական կառույցներով, որոնք գործածում է հաղորդողը խոսքում՝ հիշատակելով այս կամ այն փաստը, մատենագրական կամ այլ աղբյուր, նախորդ ասույթը և այլն, օրինակ՝ *hence, then, too, to my mind, as you say*:

2) Նմուշարկման, բառընդգրկման և շարահյուսական կառույցների կարգեր, որոնց օգնությամբ բերվում են օրինակներ, մեկնություններ, նախապես ասվածի ճշտում և այլն, օրինակ՝ *say, for instance, suppose we take, for example*:

3) Կշռադատման կարգ, որ դրսևորվում է կասկած, մտորում, գնահատում արտահայտող բառերով ու շարահյուսական կառույցներով, օրինակ՝ *it seems, no doubt, no wonder, in a sense, at any rate, at best, at least*:

Տվյալ կարգայնության օբյեկտիվությունը հաստատվում է նրանով, որ այն էականորեն համարժեք է ընդմիջարկությունների վերոհիշյալ կառուցվածքային տարատեսակություններին: Այսպես՝ միաբառ ընդմիջարկությունների բացարձակ մեծամասնությունը ազատորեն տեղավորվում է առանձնացված կարգերի մեջ, օրինակ՝ հղման կարգում՝ *hence, then, too, thenceforward*, նմուշարկման կարգում՝ *thereby, thus*, կշռադատման կարգում՝ *again, doubtless, indeed, moreover, next, of course, perhaps, say, sometimes, somewhat, though*:

Նույնը վերաբերում է և շարահյուսական կառույցների ընդմիջարկություններին, օրինակ՝ հղման կարգում՝ *in general, as you say*, նմուշարկման կարգում՝ *for example, for instance, that is, that is to say*, կշռադատման կարգում՝ *after all, at any rate, at best, by and large, in fact*:

Նշված խմբերից յուրաքանչյուրը կարող է բաժանվել իմաստային մանր ենթախմբերի [Александрова, 1984]:

Այս կառուցվածքային և իմաստաբանական կարգայնությունը սերտորեն կապված է ընդմիջարկությունների արտահայտչական գործառույթներին՝ ըստ այն դերի, որով հանդես են գալիս նրանք խոսքում:

Ընդհանրացված՝ ընդմիջարկությունների գործառույթները «բնութագրում են հաղորդվածի հարաբերությունը հաղորդանյութին՝ խոսողի դիրքերից», այսինքն՝ այն սերտորեն կապված է եղանակայնության կարգին [Виноградов, 1954]:

Հայտնի է, որ եղանակայնությունը հասկացական կարգ է՝ այնպիսի նշանակությամբ, որով որոշվում է խոսողի վերաբերմունքը ասույթի բովանդակությանը և վերջինիս վերաբերմունքը իրականությանը՝ արտահայտված բառային և քերականական տարատեսակ միջոցներով (խոնարհման ձևեր, եղանակավորող բայեր, հնչերանգ, բառային և դարձվածաբառային միջոցներ): Ընդմիջարկությունները վերլուծելիս եղանակայնության՝ վերը թվարկած արտահայտության միջոցները, իսկ գլխավորապես՝ համաշարը և շրջապատը, պետք է դիտարկվեն արտահայտչական խոսքի կառուցվածքի հայեցակետով:

Ընդմիջարկությունները շարադասական եռակի հնարավորություն ունեն. կարող են լինել առաջադաս, միջադաս և վերջադաս: Մակայն այս եռակի շարադասությունը կամայականություն չի ենթադրում: Կան որոշակի օրինաչափություններ, և ընդմիջարկությունների դիրքավորումը փոփոխակվում է՝ համաձայն այդ օրինաչափությունների: Ընդմիջարկությունների շարադասական ամեն մի դրսևորում ունի իմաստաբանական որոշակի պայմանավորվածություն: Ընդմիջարկությունների համիմաստությունը սովորաբար պայմանավորում է նրա տեղորոշումը ասույթի այն հատվածի մոտ, որին այն վերաբերում է: Շարադասական տեղորոշման համար էական նշանակություն ունեն ասույթի գործառական հեռանկարը՝ առկայացական տրոհումը, և ռիթմական կազմավորումը:

Ընդմիջարկությունը կարող է լինել ասույթի իրազեկության ինքնատիպ խտացում: Եվ իրոք, ընդմիջարկության կամայական բացահայտմանը (օրինակ՝ միաբար ընդմիջարկությունից մինչև «բնականոն» նախադասություն հասցնելը) հետևում է առոգանության, շարադասության, ստորոգման բնույթի, եղանակայնության և այլնի փոփոխություն:

Խոսքային հոսքի կետադրությունը և հատութավորումը: Ինչպես հայտնի է, հատութավորումը խոսքի անդամատման եղանակ է, որ կատարվում է առոգանական միջոցների օգնությամբ խոսքի (տեքստի) որոշակի ստեղծագործության իմաստաշարահյուսական մեկնաբանության նպատակներով: Խոսքի հատութավորումը մեծ նշանակություն ունի տեքստի անդամատման ճիշտ հարցադրման համար: Խոսքը հատութավորելիս գլխավորը սահմանային, այլևս անբաժանելի հատույթի՝ տարրի որոշումն է: Իմաստաշարահյուսական անդամատմամբ բացահայտվող այդ տարրը շարույթն է: Շարույթը տեքստի՝ առոգանական միջոցներով ձևավորված իմաստային նվազագույն միավորն է հատութավորում իրականացնող առոգանական, վերհատութային միջոցներից (դրանք են՝ դադար, տեմպ, ռիթմ, տոն, ուժգնություն և այլն) կարևոր դեր ունի դադարը: Բնական է, որ խոսքի անդամատումը շարույթների՝

դադարների միջոցով իրականացվում է մեղեդային թաղանթի փոփոխությամբ և առողջանական այլ հարաչափերով:

Հաստությամբ սերտորեն կապված է ասույթի նպատակին: Մենք չենք կարող հաստությամբ տեքստը, մինչև չիմանանք, թե հատկապես ինչ ենք ուզում հաղորդել ունկնդրին:

Առողջանությունը մեծ նշանակություն ունի շարահյուսական կարգայնության համար: Այս կամ այն առողջանական ձևը որոշում է որևէ շարության միավորի այս կամ այն շարահյուսական գործառությունը, նրա արտահայտչական հայեցակետը: Այս վերջին հայեցակետով արտահայտության պլանում առաջնային կարևորություն ունի ռիթմը: Խոսքի ռիթմային կազմավորումը լեզվական հանրույթ է: Այն մեծ չափով կապված է մարդու կենսառիթմի և շրջակա բնության ռիթմով [Александрова, 1984]:

Ռիթմը ձևավորվում է ոչ միայն առողջությամբ, այլև լեզվական միջոցներով: Մակայն առողջությունը կազմավորում է այդ լեզվական միջոցները որոշակի համասեռ միավորների մեջ՝ պարբերաբար հերթագայվելով խոսքային հատույթում: Այդ միավորներն ապահովում են որոշակի կարգավորվածություն, որն էլ նշանակում է, որ ռիթմը բաղադրում, կազմավորում է խոսքը (տեքստը): Տեքստի կառուցման օրինաչափությունների ուսումնասիրությունն առաջադրել է մի քանի խնդիր՝ կապված նրա կազմավորման, տարաբնույթ նշանների ի հայտ գալու հետ, որոնցով իրականանում են տեքստի ամբողջականությունն ու հյուսվածությունը: Ահա տեքստի ռիթմը վերագրվում է այդպիսի տեքստահյուս, տեքստակազմ միջոցների:

Գիտական տեքստը (հատկապես գրավոր) ունի ավելի կայուն ռիթմական բնութագիր: Գիտական խոսքում ռիթմը վերստեղծում և նմանագործում է գիտնականի, հեղինակի, դասախոսի մտքի շարժումը:

Տեքստի շարահյուսական կառուցվածքի արտահայտչական հնարավորությունները: Լեզուն, ինչպես հայտնի է, ծառայում է ոչ միայն մտքերի ձևավորմանն ու հաղորդմանը, այլև առ հաղորդվող նյութն ունեցած հարաբերության արտահայտմանը: Երբեմն թվում է, թե այդ

գործառույթները գոյություն ունեն միմյանցից անկախ, այդ պատճառով էլ մի լեզվական տիրույթում իրականացվում է հաղորդման գործառույթը (տարբեր դասակարգումներով՝ հաղորդակցման, ներկայացման, վերաբերման և այլն), իսկ մյուսում՝ ներգործման գործառույթը (որը կոչում են «հուզարտահայտչական», «գեղագիտական», «բանաստեղծական» ևն):

Իրականում դրանք, անքակտելիորեն կապված լինելով, ներկայացնում են մարդու՝ որպես մտածող և խոսող անհատի լեզվական ստեղծագործությունը: Այդ պատճառով էլ ցանկացած լեզվական գործունեություն, անգամ այն, որի հիմնական նպատակը պարզ հաղորդման գործառույթն է, զուրկ չէ արտահայտվածությունից, այլ կերպ ասած՝ արտահայտչականությունից: Լեզվի արտահայտչական գործառույթն ընկալվում է որպես լեզվական ստեղծագործության հեղինակի հուզական վիճակի դրսևորում՝ իրականության նշանակված առարկաների ու երևույթների նկատմամբ ունեցած նրա սուբյեկտիվ վերաբերմունքով: Այն, թե ինչպես կարելի է լեզվական միջոցներով առավելաչափ հասնել ցանկալի նպատակին. միայն հաղորդելը, սեփական վերաբերմունքը փոխանցելը, համոզելը, տարբեր տեսակետների առկայությունն ու գոյություն ունենալը՝ կողմնակի կամ բավական շահագրգիռ դիրքորոշմամբ ցույց տալն էլ հենց՝ հաղորդման բազում այլ գործաբանական նպատակներով, ներկայացնում է լեզվի արտահայտչական ներուժի ուսումնասիրությունը:

Համալեզվական հիմնակարգ լինելով՝ արտահայտչականությունը շոշափում է լեզվի բոլոր ոլորտները, և դրա արտահայտչամիջոցների զինանոցն ուղղակի անձայր է: Մեզ համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում շարահյուսության արտահայտչականության հնարավորությունները: Հայտնի է, որ Վ. Վինոգրադովը համարում էր, որ «...ռճաբանությանն անմիջականորեն առնչվող լուրջ լեզվական խնդիրներ են այս կամ այն շարահյուսական կառույցին կամ ռճաշարահյուսական կառուցվածքների համակցումներին հատուկ հուզարտահայտչական երանգները» [Виноградов, 1981]: Նա կարևորում էր

նույնիսկ պարզ նախադասության կառուցվածքի կազմության և ծավալի տարբերությունները ոճաբանության համար:

Այժմ լեզվական արտահայտչականության հարցերին պատշաճ ուշադրություն է դարձվում: Վ. Վինոգրադովից հետո արտահայտչական շարահյուսության վերաբերյալ նշվում է դրա՝ շարահյուսության կարգային ապարատին պատկանելությունը: Օ. Ալեքսանդրովան կարծում է, որ իրավացի կլինի ներմուծել «արտահայտչական շարահյուսություն» և «ոճական շարահյուսություն» հասկացությունները, քանի որ դրանց ուսումնասիրության առարկաները տարբեր են. «արտահայտչական շարահյուսության» մեջ՝ հուզական խոսքի լեզվաբանական հիմքերը և «ոճաբանական շարահյուսության» մեջ համագործածական լեզվական միջավայրի արտահայտչամիջոցների ներուժն են ու առկա հնարավորությունները [Александрова, 1984]:

Ինչ էլ որ վերջնականապես կոչվի հետազոտության այս ոլորտը, այն կոչվելու է շարահյուսական և որպես այդպիսին բաց է ուսումնասիրության համար:

Շարահյուսության արտահայտչականության հնարավորությունների համար կարևոր է այնպիսի երևույթների ուսումնասիրությունը, ինչպիսիք են անդամատումը (պարգեյացիան), կցորդումները, ներդրումները (պարենթեզը), այնպիսի հնարքների գործադրումը, ինչպիսիք են շարահյուսական գուգահեռայնությունը, աճունությունը, հակադրությունը, փոխանցումը, ամփոփումն ու զեղչումը, հատուկ կառույցների օգտագործումը (տարրալույծ, ուժգնացող՝ do, cannot, but և այլն):

Անդամատումը, ինչպես հայտնի է, լեզվաբանության մեջ մենարժեք մեկնաբանություն չի գտել, այդ պատճառով էլ հարկավոր է նշել, որ այն մեր աշխատության մեջ կոդիտարկվի որպես տեքստի անդամատում՝ նախադասությունների գործառական ոճերի պատկանելությամբ, հեղինակի անհատական նպատակառդվածությամբ, լսարանի համար նախատեսվածությամբ պայմանավորված: Հասկանալի է, որ այստեղ կարևոր են և՛ նախադասությունների շարադասությունը, և՛ տեքստում դրանց փոխկապակցվածությունը, և՛ տարբեր տիպի նախա-

դասությունների փոխհարաբերություններն ու դրանց տարածվածությունը:

«Խոսք» հասկացության բարդությունը լեզվաբաններին մղում է դրա մանրազնին վերլուծության համար անհրաժեշտ անդամատման նոր հնարքներ գտնելուն, որպեսզի հետո համադրությամբ ստանան ուսումնասիրվող երևույթի ընդհանուր պատկերը: Հենց այս նպատակով Օ. Ալեքսանդրովայի կողմից ստեղծվել է «շարահյուսական վերլուծությունների մակարդակ» համակարգը, որը ներառում է շարահյուսության «կայական» (ստատիկ) մակարդակ (ուսմունք նախադասության անդամների մասին), շարահյուսության «գորութենական» (դինամիկ) մակարդակ (ուսմունք նախադասության գործառական հեռանկարների մասին), խոսքաստեղծ ներմուծումների մակարդակ (խոսքակազմ կառույցների կապը տեքստի և նախադասությունների հետ) և ասութային մակարդակ (ենթատեքստային շարույթների կապը) [Александрова, 1984]:

Վերոնշյալ մակարդակներից յուրաքանչյուրում լեզվական երևույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս հասկանալ դրանց առանձնահատկություններն ու հետագայում գործադրել խոսքի կառուցման մեջ:

Նշված մակարդակներից առաջինը բոլոր մնացյալների հիմքն է և ներկայացված է նախադասության վերլուծությամբ՝ ըստ անդամների: Այս ուսմունքի հետ կապված են նախադասության հիմքային կառուցվածքի հասկացությունը, դրա տիպերի, հիմքային կառուցվածքի կանոնական և ոչ կանոնական տարբերությունները:

Ներառյալ կամ ներդրյալ արտահայտությունների (պարենթեզային ներմուծումների) մակարդակն իր հերթին ուղղորդված է դեպի տարբեր տեսակի բառերի և կառույցների ուսումնասիրություն, որոնք նախադասության անդամներ չեն, բայց մտնում են նրա կազմի մեջ՝ նախադասություն ստեղծելու, իմաստի և ենթատեքստի կապն ապահովելու համար: Ինչպես գրում է Օ. Ալեքսանդրովան, խախտելով և քանդելով շարահյուսական գծային կապերը՝ ներդրումներն իրենց բովանդակու-

թյամբ լսողի/ընթերցողի ուշադրությունը հրավիրում են ավելի վաղ ասվածի վրա և դրանով թույլ են տալիս այն աղերսել (ընդհանրացումներ անել, ենթադրել, հաստատել դրույթը և այլն) տվյալ պահին հնչող բովանդակությանը [Александрова, 1984]:

Ներդրումների մասին գոյություն ունեն մի շարք կարծիքներ: Օ. Ախմանովայի «Լեզվաբանական տերմինների բառարանում» հանդիպում ենք հետևյալ ձևակերպմանը. «Նախադասության կազմ ներառված, բայց քերականորեն դրա հետ չկապված բառեր, բառակապակցություններ կամ այլ նախադասություն» [Арнольд, 1990]: Ներդրյալների այս առաջնային հատկությունը՝ նախադասության քերականական կազմի մեջ չմտնելը, նախկինում դիտարկվում էր որպես առաջնային բոլոր լեզվաբանների կողմից: Ներդրյալների գործառույթը, սակայն, այն է, որ բնութագրում է հաղորդումը՝ հաղորդման վերաբերյալ խոսողի դիրքերից: Հաջորդող ձևակերպումներում տրվում է այս հասկացության բնութագիրը, դրա ձևավորումն ու դերը խոսքում:

Այսպես՝ Ն. Վալգինան տալիս է հետևյալ ձևակերպումը. «Միջանկյալ համարվում են այն բառերը, բառակապակցությունները և նախադասությունները, որոնք արտահայտում են խոսողի վերաբերմունքը խոսվածի վերաբերյալ՝ տալով ընդհանուր գնահատական, ցույց տալով հաղորդման աղբյուրը, կապը ենթատեքստի հետ և այլն: Գնահատողականության արժեքը՝ եղանակային, հուզարտահայտչական, միջանկյալ կառույցների առաջնային նշանակությունն է: Այդ կառույցները բովանդակում են լրացուցիչ հաղորդումներ, հարակից տեղեկություններ: Դրանք արձագանքում, բացատրում և մեկնաբանում են հիմնական նախադասությունները տարբեր հարաբերություններում» [Валгина, 1980]: Բերված սահմանումը գործառական է. այն ցույց է տալիս, որ միջանկյալ տարրերի շարքին կարող են դասվել նաև նախադասության այնպիսի մասեր, որոնք դիտարկվում են որպես վերոնշյալ գործառույթներից մեկի իրագործող:

Գոյություն ունեն ներդրյալների տարբեր դասակարգումներ՝ ըստ դրանց կառուցվածքային կազմի, ինչպես նաև արժեքի և խոսքի մեջ

ունեցած նշանակության: Օ. Ալեքսանդրովայի չափազանց հետաքրքիր ուսումնասիրությունն այդ ոլորտում ներկայացնում է հիմնականորեն՝ որպես այդ միավորների առավել էական հատկանիշների առանձնացում: Դրանք հղումների, նմուշարկման և երկբայության հիմնականներն են:

Հղումների հիմնականագի ներմուծումը խոսք օգտագործվում է որևէ փաստին հղում անելու, գրական կամ այլ աղբյուրը նշելու, ավելի վաղ ասված սեփական խոսքին ուշադրություն սևեռելու նպատակով և այլն: Օրինակ՝ «hence, then, too, to my mind, as was shown, as we have seen» և այլն:

Նմուշարկման հիմնականագրը գործադրվում է, երբ բերվում են ավելի վաղ ասվածի օրինակներ, բացատրություններ, ճշգրտումներ, ինչպես նաև ասույթի տարբեր մասերի մեջն եղած հարաբերությունները շեշտելու, հաղորդման կարգը կամ կարևորությունը ցույց տալու, ընդհանրացումն արտահայտելու, արդյունքների գնահատման եզրակացություններ անելու և այլնի համար: Օրինակ՝ for instance, for example, suppose we take, say, firstly, secondly, third(ly), thus, in conclusion:

Երկբայության հիմնականագի ներմուծմամբ արտահայտվում են կասկած, թերահավատություն, մտորում, գնահատում և այլն: Օրինակ՝ it seems, no doubt, no wonder, at any rate, at best, so to speak և այլն:

Բոլոր թվարկված ներմուծումները դասակարգված են նաև դրանց կառուցվածքի տեսակետից.

1. Ներդրյալ կամ միջանկյալ բառեր՝ again, anyway, doubtless, however, indeed, moreover, next, nevertheless, perhaps, probably, though, thus և այլն. առավել մեծ հաճախականություն ունեցողներից նշվում են however, say, then, therefore, well:

2. Ներդրյալ կամ միջանկյալ բառակապակցություններ՝ after all, at any rate, at least, for example, for instance, in addition, in a sense, in a way, in fact, in general, in my opinion, on the contrary, on the other hand, of course, on this basis, at any time, with qualifications already noted և այլն. առավել մեծ հաճախականություն ունեցողներից են for example, for instance, no

doubt, of course. հատկապես տարածված են *ly*-ով ներմուծումները՝ quite independently, more importantly, evidently but interestingly, generally speaking, reasonably enough, vaguely enough, clearly enough, quite hypothetically, no doubt, imperfectly and often obscurely և այլն:

3. Ներդրյալ կամ միջանկյալ նախադասություններ՝ he said, I believe, I suggest, I suppose, I think, it seems to me, one may think, they said, we may agree, we said և այլն:

Հարկ է նշել, որ կարծիք կա, թե արդի գիտական խոսքը գուրկ է արտահայտչականությունից: Դա իրականում այդպես է խոսակցական մակարդակում, թեև գոյություն ունեն առանձնահատկություններ՝ գիտական ստեղծագործության ժանրային պատկանելությամբ պայմանավորված: Սակայն **շարահյուսական** մակարդակում միշտ էլ ընտրության հնարավորություն կա՝ ի նպաստ խոսքի այս կամ այն կերպի կառուցման: Իհարկե, խոսքի տրամաբանական շարադրումը ցանկացած գիտական հաղորդման հիմնական պահանջն է, լինի այն բանավոր կամ գրավոր: Տրամաբանականության հենց այս խիստ պահանջն է գիտական ուսումնասիրության հիմնական բնութագրիչը, հետևաբար և գրավոր գիտական խոսքը տարբերվում է մյուս գործառական ոճերից:

Սակայն այս պահանջի հետ միասին գոյություն ունի նաև մեկ այլ պահանջ, այն է՝ լինել համոզիչ, ազդել լսողի, ընթերցողի վրա՝ հետաքրքրվելով քննարկվող հարցով, աշխույժ արձագանք առաջացնելով (միջնորդավորված կամ անմիջական): Այս պատճառով էլ կարելի է լիովին հիմնավորված խոսել գիտական խոսքի արտահայտչականության մասին, առավել ևս, որ արտահայտչականության հասկացությունը բավական լայն է և իրագործելի է տարբեր միջոցներով, այդ թվում նաև խոսքի տրամաբանական հաջորդականությամբ:

Այստեղ զգալի դեր է խաղում անդամատման կիրառումը, որը նախադասության շարահյուսական կառույցների կապերն է կտրում՝ միաժամանակ գործառական իմաստով կապելով ոչ միայն նախադասության մասերը, այլև դրանից դուրս եղած հատվածները: Դրանք նպաս-

տում են տեքստի ամբողջականությանն ու միաժամանակ ծառայում արտահայտչականությանը:

Խոսքի արտահայտչականության կարելի է հասնել նաև նախադասությունների կառուցվածքի միջոցով, դրանց հատուկ դաշնությամբ, արտաքին ներմուծումներով, սակայն իրականում հենց հատուկ ազդեցություն ստանալու նպատակով՝ ոչ միայն **արտաքին**, այլև **իմաստային**: Հայտնի է, որ գիտական խոսքը բնորոշվում է բարդ կառուցվածքների լայն կիրառմամբ, որը պայմանավորված է տրամաբանականությամբ, հնարավորության դեպքում՝ բազմակողմանիորեն հիմնավորված հարաբար մտքերի մատուցման անհրաժեշտությամբ: Դրա հետ մեկտեղ, գրավոր գիտական խոսքը խիստ կողավորված է՝ ի տարբերություն գեղարվեստական խոսքի, որտեղ հեղինակի ստեղծագործական ներուժը արտացոլվում է հատուկ լեզվի միջոցով՝ ունենալով անհատական ոճի բնութագրիչներ լեզվական համակարգի բոլոր մակարդակներում, այդ թվում՝ շարահյուսական: Դրա համար էլ ընդունված կանոններից ու կարգաբերվածությունից ցանկացած, ամենաչնչին իսկ շեղում պարտավոր է փաստել արտահայտչականության պահը, իսկ որոշ դեպքերում՝ նաև անհատական հեղինակային ոճը:

Շարահյուսությունը մեծ դեր է խաղում իմաստի փոխանցման և տարբեր՝ լրացուցիչ ոճական արժեքների արտահայտման գործում: Շարահյուսական կառույցները մեծ մասամբ ենթակա են ընդհանրական գործածման, չեզոք են, սակայն բառային և ձևաբանական բովանդակությամբ կարող են տարբերվել՝ համաձայն ոճական առանձնահատկությունների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Александрова О.В.** (1984), Проблемы экспрессивного синтаксиса. М.: Высш. школа. – 211 с.
2. **Арнольд И.В.** (1990), Стилистика современного английского языка: (Стилистика декодирования) Текст: учеб. пособие для студентов пед. ин-тов по спец. «Инос. яз.». / И. В. Арнольд. 3-е изд. – М.: Просвещение – 300 с.

3. **Бархударов Л.С.** (1975), Язык и перевод (Вопросы общей и частной теории перевода), М. – «Междунар. отношения».
4. **Ванников Ю.В.** (1965), Явление парцелляции в современном русском языке Текст. / Ю. В. Ванников. М., – 189 с.
5. **Валгина Н.С.**, Синтаксис современного русского языка. М., 1980 - 416 с.
6. **Виноградов В.В.**, (1954), Некоторые задачи изучения синтаксиса простого предложения. // Вопросы языкознания.
7. **Виноградов В.В.**, (1981), Проблемы русской стилистики. Москва,– 319 с.
8. **Гак В. Г.**, (1981), Теоретическая грамматика французского языка. Синтаксис, М., – 832 с.
9. **Иванчикова Т.В.** (2010), Формирование речевой компетентности студентов экономических специальностей вуза: ситуационный подход Текст. / Т.В. Иванчикова //Дис. . д-ра пед. наук. -М.,.
10. **Розенталь Д. Э.** (1977), Практическая стилистика русского языка Текст. : учебник для вузов / Д. Э. Розенталь. М.: Изд. 4-е. испр — М.: Высш. школа.,-316 с.

Ապրելայան Մարգարիտ – բ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, էլ. փոստ՝ margaret.apresyan@ysu.am:

Այվազյան Աննա - դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն, էլ. փոստ՝ a.ayvazyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն՝ 04.11.21, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի և «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» միջազգային պարբերականի խմբագրակազմի կողմից, ընդունվել է տպագրության՝ 21.12.21: